

« բանց բերանոյ ըռ հալէ զվէմս, տաշէ  
 « զապառաժմ, կակդացուցանէ զբարացեալ  
 « սիրտ և հալէ զերկաթմ. և զայլս՝ սոյն-  
 « պէս են շնորհալիք, հիացուցիչը և յա-  
 « նասելիք:

« Վասն որոյ ցանկայ անձն մեր բոլոր  
 « տեսանել զբեզ, ծէր, լսել զմայն ըռ  
 « բաղցրանուազ, հոգեւոր և արդիւնա-  
 « բար և տեսանել զառաքելատիպ և գհրա-  
 « շագեղ պատկեր ըռ՝ որը են յիշեցեալ  
 « յերգս Երգոցն ի Առղումնէ»:

« Այսպիսեց մեծաւ աենչմամբ և յայտ

« յոյժ խոնարհութեամբ և ծայրագոյն սի-  
 « րով, ի հեռաստանէ իրը մերձ առ մերձ՝  
 « զաստուածաջօշափ և աստուածազործ  
 « աջ ըռ առաջի անկեալ մեծափառ հայ-  
 « բութեանդ՝ համրուրեմը »... (Նուասուա-  
 րունեղ ծասայք ձեր Յասիկ և Յակուեն  
 և առաջափաք տեսնեամբ երկրպագող տերու-  
 թեանիք բորբով սրտիւ. գրեցա զիս բույ  
 Փրկին 1731 Օդոս. 5):

Հ. ՄԻՆԱՍ Վ. ՆՈՒՐԻԿԱՆ



## ԲԱՆԱԱԿԱՆ ՀԻՆ ԶԵՐԱԳԻՐՆԵՐ

### ԼՈՒՏՈՆԻ ԲԻՒՏԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

(Ժաղ. տես Ազմ. 1923. էջ 66)

Աւտարանին առաջին տասնեւեթն թեր-  
 թերն բովանդակեն յաշորդարար հետևեալ  
 գունագեղ, թարմ և գեռ պայծառ լի-ի-  
 շեան մեծալիք պատկերներն:

1. Թաղումնեն Ցեասն: Երկու դիակիրք,  
 կանգնեալ մի ի մնարից և մի յանոտից,  
 կրեն վերամբարձ ի վերայ ձեռաց զպա-  
 տանեսպատ մարմինն Յիսուսի, դիմաւո-  
 րեալ կրկնարագկեայ խաչիւ և տոռնապր-  
 տոյտ զարդանկար երկու լուցեալ մոմվք:  
 Սուրբ Աստուածածին և միւս Մարիամ  
 կացեալ գոն յաջ և յահեակ՝ թափիծ ի  
 դէմս՝ ընդ հովանեաւ երկու ձեռնամած  
 հրեշտակաց:

2. Մարդկաբարդ: Մուտն յԵրուսաղէմ:  
 Քրիստոս նստեալ միակողմանի ի վերայ

իշոյ, աշակերտցն ընթանան հետիւսու և  
 « ծերցն սստովը ծիթենեօք և տղայցն  
 սստովը արմաւենեօք » ընդպաաջեն:

3. Ղազարու Յարսարին, Ղազարու ե-  
 լեալ ի զերեզմանէն զոյ կանգուն զազա-  
 ղին մէջ: Քրիստոս՝ շրջապատեալ աշա-  
 կերտօք՝ խաչակնըէ:

4. Քաստամօրեայ բնձայումն ի Ցաձարն:  
 Սովորական ընտանի պատկեր:

5. Անետումն Սուրբ Աստուածածին: Եւ  
 այլն, և այլն:

6. Խնաման Ցեասն: Կապոյտ աստղալից  
 երկինք, հրեշտակը երգեն զՓառը ի բար-  
 ձունս. շողակաթ աստղն արևելից փայլէ  
 ի մուռն անբանից՝ ուր է Մանուկն, և  
 առընթեր մայրն Մարիամ. մոզք յա-  
 րեկելից գոն յատին կանգնեալ. Յովսէփ  
 աղօթէ մեկուսի. զեռահասակ հովիւ մի՝  
 ընդ զառին՝ ակնկառոյց նայէ խոնարհա-  
 բար:

7. Մէրտուրին Ցեասն: Սովորական  
 պատկեր:

8. Պայծառակերպութիւն ի թարօրտ : Քըրիստոս կանզուն : Երկու սուրբեր (անտարակոյս՝ ներկայացնելով Ենովը և Եղիաս), նոյնպէս կանզուն, յաջ և յահեակ : Ի խոնարին կոյս՝ երեք անձինք ի ծունդս անկեալ հային ի վեր :

9. Ռամարուայ : Գետրոս նստեալ ի վերայ անփառունակ նստարանի՝ ի վերնատան, երկու կարիեալ սուրբերն հոլանի, և աշ բազուկն՝ նոյնպէս հոլանի ամբարձեալ ի վեր Մնացորդ միւս մետասան աշակերտն զոն ի ծունդս անկեալ ի մի կողմ : Քրիստոս՝ սփաճեալ զննջակաւ և ի վերայ ծնգաց՝ լուսանայ զոտս Պետրոսի :

10. Խաչերիւին : Խաչն՝ որոյ վերայ Քրիստոս խաչուած է կրկնարազկեայ է (double Cross) և որոյ մեծագունին վերայ գոն յաջօթի երկու հրեշտակներ, և արեգակն և լուսին երկուստեք խաչին բազկաց մէջ՝ որպէս խորհրդանշան : Մարիամ և Ցուզէփ գոն ի հակման :

11. Յարութիւն Տեսան: Քրիստոս նստեալ յամպ՝ ունելով ընդ աջմէ զերիս կանայս իւղարես : Ի խոնարհ կոյս՝ չորս պահապանը, զղէնս ձգեալ ի մի կողմ և համախմբեալ ի մի՝ սասանին զահի հարեալ :

12. Համբարձումն : Երկուստան Աշակերտն կանգնեալ վեց ի մի և վեց ի միւս կողմ Սրբուհոյն Աստուածածնի, հիացմամբ նային ի վեր առ Քրիստոս Քերովերեւ ամբարձեալ յերկինս :

13. Հոգեզարսատ : Երկուստան Առաքեալը բազմեալ ի վերնատան : Հոգին Առոր իջանէ ի կերպ աղաւնոյ :

14. «Ե» Որդին ընդ ամբ երկինց և կեալ : Երկորդ գալուստ՝ փառօք հանգերծ : Քրիստոս բազմեալ յամպս ի միջի զարդապանցից պարապատեալ շրջանակի : Ի յետուստ՝ լուսազարդեալ նշան խաչին և շրջապատեալ չորեցին հրեշտակօք՝ փող ի թերան : Ի ստորև՝ առ պատկերին աշակողմ՝ սուրբ մի ի ծունդս անկեալ աղօթէ :

15. Վերյին Դատաստան: Աւետարանիս մէջ ամենագեղեցիկ պատկերն և ամենէն

խորհրդաւորն՝ բաժանուած է յերկուս մասունս : Վերին խորանն ցուցանէ զթիրիստոս բազմեալ յԱթոռ փառաց յերկինս՝ ընդ Սրբուհոյն Մարիամու յաջակողմեան, և Արքոյն Յովշաննու ի ձախակողմեան : Քրիստոսի ուրբերն հանգչին ի վերայ զոյն զգոյն զարդարուն բարձի, որոյ ըուրջն՝ ընկողմաննեալ ի գետին՝ զերդ լուրջ և զգոն պահապանաց՝ պերճարուեստորէն նկարուած են չորեցին Աւետարանչաց խորհրդանշանցն, մարդ, առիւծ, արծիւ և ցուլ : Բայց ինչ որ կարի հետարքըրաց կան է՝ ստորին խորանի նիւթն է՝ պատկերելով նկարչին մտագաղիքարական ինքնայատուկ մէկ ստեղծումն, արսայայտեալ գողտրիկ իմ ճարտարաթեամբ, շատ հազուագէպ իւր տեսակին մէջ եթէ ոչ եղակի : Միթքայէլ Հրեշտակապետ, խաղաղազէմ և անվըրդով՝ զոյ կանգնեալ յաջակողմեան, Միւս զերակատարըն են կենդանակերպ և կծղակաւորերեց ստատանյայց, ի ձախակողմեան, մէծ, միջակ և փոքր հասակաւ, Կեզդոնն զըաւէ մեծ շշիոց մի՝ կախեալ ի ստորին կողմանէ քառակուսի շրջանակէն, որ բովանդակէ վերին խորանի նկարն, Թողեալ Միթքայէլ որ նկարուած է զունազեղ՝ նիւթոյն մետորդ մասն զծագրուած է սոսկ զրչաւ և մելանաւ, Արգարց և մեղաւորաց ոգիւն գոն ի կշիռ, Կշոռ աշակողմեան թաթն՝ կրելով յալթապանծ Արգարց ոսկեճամուկ՝ բայց սակաւաթիւ ողիներն խոնարին ի վայր իւր բարոյական ծանրութեամբ, մինչդեռ ձախակողմեան թաթն՝ թէպէտն լիազեղուն մեղաւորաց աղջամդջային ոգիւներով՝ բարձրանայ ի վեր իւր անբարոյական թեթևութեամբ : Մեծ և միջակ երկու սատանայցն, ի ձախակողմեան, կանգնեալ ուղղաձիգ՝ յետնոց սուից վերայ և միմեանց կազզութելով, զուն զործն կասեցուանել իւրեանց կողմի կշոռ թաթի վերընթացքն : Մի ի սոցանէ՝ կրէ ուռուցեալ պայտուսակ մի ի քամակ, անտարակոյս պարունակելով դեռ անկշռեալ ողիւներ, զորս զիզել ցանկայ թաթին մէջ, մինչդեռ միւսն՝ հրաշէկ կարթիւ, սևեռեալ

ի ծայր լծոյն կշռոցն, ջանայ ի վայր քարչել զայն համահաւասարութիւնն առ իւր կողմն շահելոյ նպատակաւ, և անհեթեթ իմ խորամանգութեամբ՝ իւրեանց փորբիկ արքանեկին յդելով առ աջակողմն, վերջինն իւր թիկնամէջն գետեղելով ի ներգոյ արդարոց ոգիներ կըող թաթին՝ խափանել ջանայ ևս առաւել խոնարհիլն՝ ի ծանրութենէ, բայց, յայտնապէս, այս բոլոր վաստակն արդէն ի զուր է, որովհետեւ Հըբշտակապետն կըելով ի ծերփն նիզակ մի նրբակազմ՝ հորիզոնարար միչ զայն ընդ մէջ կըոց ձախակողմեան թաթին կուտակեալ ողիներին, և յայնկոյս թափանցելով ընդ երիկամուն երկու սատանայիցն՝ վերջ տայ մաքառման ի յաղթութիւն արդարոց և ի պարտութիւն մետաւորաց:

16. Որդին Միածին: Քրիստոսի պատկերն: ի ներքոյ պատկերին զեեալ է (նոտրազիր) հետևեալ աղօթք, որոյ բառից կրճատմունց մէջ լիօրէն զրեմք աստանօր։ «Աստուածորդի մարիսամու յորժամ զայ-« ցես փառաց հաւը քը ընդ ամպա երկնից « յոյժ ահարկու. նիւթ երկրական հրով « քո կիզու. ըստ բանին սուրբ առաքելոյ. « ևս ոչ զինեալ եմ կահ ոսկոյ ի յականէ « կամ յարծաթոյ. այլ եմ շարեալ խոփ « խոտոյ փայտ և եղէք լուցելի հրոյ. ա-« դաշանաւը սրբո մաւր ցո և յովհաննու « բանիդ ձայնոյ զիս մերոպակին ծաղկուս « զոյց արժան առնես »... (վերջին մի կամ երկու բառերն անհետացեալ են ի պատճառու նորոգութեան բթաչափ մի մասին թղթոյն):

17. Այսոր Աստուածածին: Ալբուլին նկարուաւ է նուռն մի ի ձեռին: ի ներքոյ պատկերին գոյ հետևեալ աղօթք: «Աս-« տուածածին մայր Քրիստոսի. սերեալ « և դու յազգէն զեփ և յուզայեանըն « յեսէի յորդո յովրէտ մեծ իշխանի. « Յորժամ որդիդ յերկնից յայտնի ըստ « հոգինուագ մեծին զաթի. թէ աստուած « մեր զայ հաւաստի հուր և մըրիկ զնո-« վաւ շրջի: Զի Դանիէլ բաղաձայնի « մարզարէին հոգէնուագի. կառաց նորա

« զետր հրո հոսի. անիւց նորա փայլատա-« կի: Մեծ Գարբիէլ ներդաշնակի. կա-« նաոբն մարդկան յերկրէ յանին որ ի « քառգոյսէ յաւանդի. հողմ և ի ջուր հող « կ ի հրի: Արբայն դատող յաթու նստի « յաջ և յահեակ գումարը կանգնի առ « ամուսին զատաւորի. աղազակեն փառը « յամենի: ի յայնմ ահեղ մեծ ատենի « աստուածածին մայր յինուսի, բարե-« իւաւեա խաչապաշտի ման »... (մա-ցորդ մի կամ երկու բառերն ոչ ևս են, ի պատճառու նորոգութեան թղթոյն):

Թիւր 18. Գումագեղ պատկերազարդ խորան ի ճակատ. սիրամարգ մի յաջա-կողմեան. ի կեղզոն խորանին մանրանը-կար Հօրն Աստուածոյ կրելով ի զոյ զիթզին Միածին և ի զոյ վերջնոյն զՀոգին Ալորը աղաւնակերպ: ի ներքոյ խորանին՝ բա-ժանեալ յերկուս սինակս և շրջանակեալ տոռնաշաղանակ կամարօց, կարմիր և կա-նաշ թոյրով, ընտրազոյն տառերով՝ գրուած « առաջին մասն թղթոյն Եւսերիոսի առ կարպիհանոս – « Ամովնի աղէբասնդրացւոյ բազում աշխատութեամբ և ճշգրտի փոյթ ի մէնջ առեալ ..... », որոյ ի սոտրէ գտանի նաևսն նկարագրութիւն զարդա-պատկերին. « Առաջին խորանն համակ ծիրանին սիւնցն և ի մէջ խորանին ընդ զեղով նկարեալ՝ որ սուրբ երրորդութիւն է »:

Թիւր 19. Մնացորդ մասն թղթոյն Եւսերիոսի և, ի ճակատ անզր, զարդա-պանոյն խորան պատկերելով զմանրանը-կարսն Եւսերիոսի և կարպիհանոսի, որոյ ներքոյ գոյ նկարագրութիւնն. « Երկրորդ խորանն լազարտով և կանաչով է զար-զարեալ. նշանակչ զիթշին և զվերջին ցահանայագետութիւնն. և եթէ կամիս զիտել՝ զիրատցն կարդայ »:

Թիւր 20. մինչէ թերթ 27 պարունա-կեն ութն լի-թշեան զարդապատկերներ խորհրդաւոր խորանօց զարդարեալ, և բո-վանդակելով « Ամովնի կանենք », ամին-փեալ ճարտարահիւս զունագեղ սիւների մէջ, որոց բուն նկարագրութիւնն ընդօ-րինակեմք աստանօր:

Թերը 20. «Եւ է առաջին խորանն կամարդ դ. որ նշանակէ թէս տեղեակց էին սուրբ երրորդութեանն և ուսեալք ի սրբասացութեանցն և են ի սմած ծառը արմաւենից և հաւը սիրամարգ. զայլն ի խրատն կարգա որ իմանաս » :

Թերը 21. «Եւ է խորանս չորրորդ զորախոն աղաման նշանակէ. որ ի վերայ չորից սեանց կայ, որ է կապոյտ և սեաւ, և սեան ի մէջ կամարցն բոցավառ, և իմաչ նուազ գունակ երկի » :

Թերը 22. «Եւ խորանս. և. նշանակէ գտապանն նոյի. կարմիրն յոլով զի առ նոյին երեւեցաւ արիստն փրիստոսի որ միշտ պատարազի յեկեղեցիս ըրիստոնէց և աստ չուշանն և նշնինից՝ որը ունին բազում խորհուրդն » :

Թերը 23. «Եւ խորանս. ֆ. նշանակէ զիորանն արրահամու և աստ է ծառն սարեկան որ կախեցաւ իոյն փրիստանակ իսահական որ նշանակէ գտէրն փրիստոս ի խաչին պատարազեալ » :

Թերը 24. «Իսկ, է. և լ. խորանըս են մովչսեան, և են սինքն խարիստոտը և գոյնն կապոյտ և կարմիրն նուազ, և են ի խորանի աստ հաւը աղաւնից կարմակտուցը. որը նշանակն զրահար և զայլ պունին<sup>1</sup> կան » :

Թերը 25. «Իսկ. լ. խորանն որ է աստ կացաւըն և աստ սեղան կա ի վերայ խորանին և աղաւնից ոմանց յետս ի խորանն հային և ոմանց ուղիղ հային և. ի. եղջիւր որ աստ են մովչս և ահարոնն » :

Թերը 26. «Եւ. թ. խորանս որ է տաճարն սողոմոնի սեաւն և կապոյտն նուազեալ և կարմիրն առաւ(ել)եալ. հաւը խորանիս արազադղն են յաւրինակ մարգարէիցն և սեաւնն որ ի վերայ խորանիս՝ մէջն թափուր, և ծառը նոնենից կեղեւիւ ծածկեալ. են և աստ ծառը արմաւենից, ստորուստ ի վեր տերեն » :

1. Այս «պունին» բառն մէզ անծանօթ է. Անուագոյս ընթանել պունիկ կամ(այց) լր. Խ.

2.  $1057 + 551 = 1608$  յարդ չափան.

Թերը 27. «Եւ. Ժ. խորանս նոր եկեղեցյ է աւրինակ, պայծառացեալ կարմրաւը և են հաւը ձկնբաղը և ոմանց ի սոցանէ յարազս հային, են և մրտմունց կարմրակտուցը, և ոմանց պարզեալ առմիմեանս զգեցրն, և ոմանց յետս են ողբեալ և խաչ ի վերայ խորանիս, ի թվին հայոց հազար յիստն եւթ՝ ընդ նմին գործ է անկիւն ես մեսրոպին մնեաց ներուն. զրեցի զայս զիրս ճարտարիսաւուն: Երրորդութիւնն միարուն որ է նա յեյս ամեննցուն զգայիւնէն և զննողս նորուն առնէ արժան աղջ գասուն: Ամէն » :

Ուրիշ լի-լիշեան նկարներն են.

Թերը 29. Մատթէոս, նստեալ զրէ:

Թերը 105. Մարկոս, և այլն, և այլն:

Թերը 156. Ղուկաս, և այլն, և այլն:

Թերը 240. Յովհաննէս կանգնեալ իւր անձակին մէջ ճառէ առ Պիօրորոս, որ նստեալ զրէ:

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՐԵԱՆ

(Չարայարիլի)

## ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐՔ

### Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆԶԻՒ

(Չար. տես բազմ. էջ 60)

Բ.

ԳՐԻԳՈՐԻ ՆԻԿԱՌՈՅԻՈՑ

ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅՑ

Զայ Հայ բժշկական Ջեռագիր մը, որ իր մէջը չունենայ «ՅԱՂԱԳԻՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՍԱՐՄՈՅՑ» վերնազրով մաս մը, և հետն ալ՝ «Գրիգորի Նիկանյ Եպիսկոպոսի տաշցեալ» բառերը կամ խօսը. և այդ բոլոր՝ անկանակած՝ առնուած են այն օրինակէն՝ զր 716 թուականին կ. Պոլսց մէջ թարգմանած է ՍՅԱՓԱՀԵՆԱԾ ՍԻՒՆԵՑՑ մեծանուն եպիսկոպոսը:

Բայց Նիւասցիի այս գործը միշտ համառու վիճակի մը մէջ է որ հիւրցնկալած